

## ԱՐՑԱԽՅԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՄԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

### Է. Զ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Արցախյան բանահյուսության մեջ նշանակալի տեղ են գրավում հեքիաթները:

Դրանց շարքում թեպետև հանդիպում ենք ֆանտաստիկ, կախարդական, կենդանիների և անմահների հեքիաթների, սակայն ավելի մեծ քանակություն են կազմում իրապատում, կենցաղային, երգիծական բնույթի հեքիաթները, որոնցում կյանքի իրական, ճշմարտացի պատկերների հիման վրա արտացոլվում են արցախյան կենցաղը, բնությունը, ժողովրդի կենսափիլիսոփայությունը, հոգեբանությունն ու իդեալները:

Դրանցում գովաբանվում են մարդու դրական հատկանիշները՝ խելքը, քաջությունը, ճարպկությունը, հնարամտությունը, բարձր բարոյականությունը, ֆիզիկական ուժը, աշխատասիրությունը և դատապարտվում բացասական հատկությունները՝ ազահությունը, աչքածակությունը, թուլամորթությունը, դավաճանությունը, անհավատարմությունը, վախկոտությունը, ծուլությունը և այլն: Սակայն ինչ խոսք, այդ ամենը կերպավորվում է հեքիաթներին հատուկ կառուցվածքային, սյուժետային, պատկերային և արտահայտչական միջոցների օգնությամբ, որոնք իրենց վրա կրում են արցախահայության ինքնատիպ կնիքը:

Ահա ժողովրդի սիրած կերպարներից Ծիլկանը (համանուն հեքիաթում), որը «խելունք ան ընդ մ, լոք տվող, սաղանու փափուն կյեցած, համ էլ սրտու փոշ տնսու օճող»: Նա գրագետ է, բարյացակամ, անձնագոհ, ճարպիկ, կարողանում է խաբել վիշապին և փրկել իր ու իր եղբայրների կյանքը: Այդ է պատճառը, որ երկրի թագավորը բարձր է գնահատում Ծիլկանին. «Ծիլկան, վերթի, տնսու համ հնարավըս, համ խելունք, համ էլ թամահ չօճիս, ամեն խթա էլ ծիլ ըս տում պրծնում», և իր աղջկան ամուսնացնում նրա հետ ու նրան դարձնում երկրի թագավոր:

Ծատ բնորոշ է հեքիաթի հեղինակ ժողովրդի երազանք-ցանկությունը՝ «հանց թեղար խելունք խոսկը խելունք կործ տեռնար, ըստծու կյիրավը դաստի կդարվար, խելունքը միշտ թաքավեր տեռնար»:

«Մարը» հեքիաթում արծարծված է մարդկությանը հավերժ հուզող թեմա՝ կյանքի սերը և պայքարը մահվան դեմ: Կյանքից անմուրազ հետադող մայրը անընդհատ մաքանում է մահվան դեմ՝ հետաձգելու այն և ցանկանում է տեսնել իր զավակների բարօրությունն ու երջանկությունը:

Ըստ «Վեղը շատ չըչարե» հեքիաթի կենսափիլիսոփայության, աշխարհքում ամենաքաղցր բանը հողն է, ամեն երկրայինի սկիզբը, որից ծնվում են բոլոր բարիքները՝ հացը, բուրը, աղը և այլն: Իմաստուն հեքիաթասացը մարդուն խորհուրդ է տալիս՝ «աշկդ ծակ չի պահիս, քու դնսւնանդ քու աշկդ ա», «ծատ շատ տնգե, համա շիլ չըղնիս քրիստոսատունգը պուք տաս, քամուն պերած սերմը տնգիս»:

Ոսկե վագի հնագույն հայրենիքներից մեկի՝ Արցախի ժողովուրդը իր թագավորներից մեկի քերանով իմաստուն խորհուրդ է տալիս՝ ոչ թե ոչնչացնել խաղողը, գինի չպատրաստել ու չխմել, այլ այնքան խմել, որ մեռնելու փոխարեն կարողանալ առյուծ սպանել: «Ա ժողովուրթ, խմիշքը քըշեցեք, ամնա խմեցեք վընչ թա վըեր ընգելի մըռնելի հետե, այլ առյուծ ըսպնելի պետե»: («Առյուծ ըսպանող տղան»):

«Մըրթակեր ախճիգը» հեքիաթում գովաբանվում է քաջությունը, հնարամտությունը, ճարպկությունը, որոնց շնորհիվ հեքիաթի հերոս տղան կարողանում է խաբել սատանաներին, իր մարդակեր քրոջը և ազատվել մահից ու հարստություն ձեռք բերել: Հնարամտության գովքն է արված նաև «Փնսմավ վարթաբեղը» հեքիաթում, որի հերոս իմաստուն կրոնավորը մեծ հնարամտությամբ հայտնաբերում է ոսկու գող կնոջը:

Բնորոշ է այն հանգամանքը, որ մարդկային արժանիքները և թերությունները բնութագրելիս հեքիաթասաց ժողովուրդը խորականություն չի դնում կանանց և տղամարդկանց միջև, դրանով ընդգծելով երկու սեռի նկատմամբ էլ ունեցած իր մարդկային հավասարարժեք վերաբերմունքը:

Այսպես, «Իտի կնեզ էլ ա ինու», «Օրթնված կնեզ», «Տոն տիմողը կնեզ ա», «Թաքավըրեն ըխըրկանը խոսկը» հեքիաթներում արտահայտված են ամուսիններին հավատարիմ լինելու գաղափարը և հայ կնոջ ու ընտանիքի վերաբերյալ ժողովրդի կենսափիլիսոփայությունը՝ «Տըղընարթին հարստորթինը կնեզն ա, նրան ա պատկանում տոնն էլ, տըղն էլ... «Կնեզը պիտի խելունք ինի, մինն երկու անէ...»:

Եվ ահա այդ իմաստուն, հեռատես և ընտանեւեր կանանց շնորհիվ է, որ դարեր անընդհատ հարստնել է հայի օջախը, դառնալով համայն ազգի գոյատևման պոնտից մեկը: Այդ է պատճառը, որ «Օվչի Փիրումը» հեքիաթում ժողովուրդը հեքիաթասացը նկարագրելով որսորդ Փիրումի և իր կնոջ միջև ծագած հիմար վեճը, արձանագրում է, որ անցյալներում ընդունված չէր արցախցու ընտանիքում կնոջից բաժանվելը և դառնությամբ ավելացնում է, որ «Մինչև Օվչի Փիրումը աղաթ չըլալ, վար մարթը կնեզ տոնս քցի: Կնեզ տոնս քցիլը սրանա ետն ա անդանթ ընգանթ»:

Հեքիաթներում Արցախի ժողովուրդը կյանքի ճշմարտացի արտացոլման հետ մեկտեղ արտահայտում է նաև դարերի ընթացքում իր հոգում ձևավորած մարդկային տարրեր հատկանիշներին արժանի բարոյական գնահատականներ:

Այսպես՝ «Ահմադը» հեքիաթում մեծ և փոքր եղբայրները հնարավոր չեն գտնում ոտնատակ տալ իրենց բարեարարի տանը կերած աղոխացը ու «մին պեժակ ճուրը» և սրբապղծել նրա աղջկա պատիվը: Սակայն նրանց միջև եղբայր հանուն իր եսասիրական հաճույքի պատրաստվում է այդ շնությունը կատարել, որի համար էլ պատժվում է՝ զըրկվելով հոր ժառանգությունից: Ընդամենը երկու էջում ժողովուրդը սքանչելիորեն ներկայացնում է քաղաքակիրթ մարդկության բոլոր ժամանակների վսեմ համոզմունքներից մեկը՝ բարեգործությանը պետք է պատասխանել երախտագիտությամբ, և դատապարտում է կամքի թուլությունը, աչքածակությունը և եսապաշտությունը:

Ձևավորելով ազնիվ, խելոք, քաջ ու հնարամիտ, ձեռներեց ու աշխատասեր մարդու իր իդեալը, հեքիաթասաց ժողովուրդը անխնա ձաղկում, դատապարտում և ծաղրում է մարդկային թերություններից հատկապես չարությունը, ազահությունը («Թաքավըրեն ըխըրկանը խոսկը», «Պոզը», «Երկու ախպեր»), ծուլությունն ու հիմարությունը («Մրթըլկնեզ՝ ճոխտն էլ մին խելքու»), ժխտությունն ու աչքածակությունը («Ղազը»), սեփական խելքի պակասը («Վիտուկես»), և հաստատում է այն ճշմարտությունը, որ մարդկային իմաստությունը գալիս է տարիների հետ («Գյիտկան պառավը»):

Բազմազան ու բովանդակալից է արցախյան հեքիաթների թեմատիկան, որում ընդգրկված են կենցաղ, սովորություններ, ավանդություններ, աշխատանք, հայրենիքի պաշտպանություն, մարդկային բազմատեսակ հարաբերություններ, ժողովրդի երազանքը, իդեալները և այլն:

Եվ դրանք բոլոր հեքիաթներում արտացոլված են երևույթների բնական, ճշմարտացի ընկալմամբ, համամարդկային ըմբռնմամբ, ազգային ինքնատիպ հոգեբանությամբ ու երանգներով:

Արցախյան հեքիաթներում բովանդակությունը զարմանալի կերպով ներդաշնակում է գեղարվեստական ձևին:

Դրանցում լայնորեն օգտագործված են այդ ժանրի սկիզբը և վերջը բնութագրող դասական պատմելաձևեր, ժողովրդական պարզ, պատկերավոր լեզվամտածողության ինքնատիպ օրինակներ: Ահա դրանցից մի քանիսը. ժուկով ժամանակով, ընում ա չընում, օխտը օր, օխտը քշեր հրսանք ըն անում..., Թախտը հաստատ պահել..., Հավըր չորան թևավը, օխտը չորան պորտավը— ըստողեքավ անց չի կացալ..., առոք-փառոք նստած..., Թաքավորն ապրած կենա..., Ըշխարքովս մին ա տեռնում..., Ծիլկան հասնում ա չորան մուրագին տոք էլ հասնիք ձեր մուրագին..., Յըրգինքեան իրեք խնձոր ա վեր ըղնում, մինը էս քաթը ըսողեն, մինը սկընողեն, մինն էլ ամեն հինչը կուրցրած խեղճ օջախ ըխպրեն... և այլն:

Արցախյան հեքիաթների բնորոշ հատկանիշներից է պոեմների պարզությունը, հակիրճությունը, դրամատիկ հագեցվածությունը և գործողությունների արագ հաջորդականությունը, որի հետևանքով կենսականորեն ճշմարիտ հանգույցը, զարգանալով ու մեծացնելով պատմի ներքին լարվածությունը, հասցնում է դրամատիկ կուլմինացիային, որին հաջորդում են հոգեբանորեն և բարոյապես համոզիչ հանգուցալուծումները, որոնք արտահայտվում են ժողովրդի կենսափիլիսոփայության ու երազանքների, իդեալների ու ձգտումների բարոյախրատական պատգամներով:

Հեքիաթների պատումին մի առանձին հմայք են տալիս երաժշտական ինքնատիպ հնչողությունը, ժողովրդական պատկերավորման ու արտահայտչական միջոցների գունագեղությունը, հակիրճ ու սրամիտ բնութագրումները, առարկաների արտաքինի դիպուկ նկարագրները և գեղարվեստական պատկերման այլ միջոցներ, որոնք դարձրել են ընթացքում մաքրվելով ավելորդություններից, անհիմաստ զարդանախշերից, բյուրեղացել են ու ստացել ներգործության մեծ լիցք:

Հեքիաթներում արտահայտված դաստիարակչական գաղափարները չեն ընկալվում որպես արագ մոռացվող ճանաչողական տեղեկատվություն, այլ՝ հոգին ու բանականությունը պարուրող, խորապես ապրված համոզմունքներ, որոնց հիման վրա ձևավորվում է մարդու անձնական և հասարակական վարքագիծը:

Մարդ-բնություն փոխհարաբերությունները դարեր անընդհատ դարձել են իմացաբանական, գեղագիտական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, հոգևոր-քարոչական և այլ հայեցակետերով վերարտադրման և քննության նյութ:

Դեռևս տոտեմական ժամանակաշրջանում գիտակցորեն չկարողանալով քացատրել բնության երևույթները, մարդը իր պաշտամունքի առարկան է դարձրել բնության տարբեր մասունքները՝ հողը, արևը, լուսը, ջուրը, կենդանիները, բուսականությունը:

Մենք համաձայն չենք այն հետազոտողների կարծիքին, որոնք այդ պաշտամունքի պատճառներ են համարում այն ժամանակվա մարդու կողմից միայն բնության ուժերի գերբնական զորությունները գիտակցորեն չըմբռնելը, ուստի և դրանից ծնված բնազդական վախը: Մեր խորին համոզմամբ դեռևս գիտակցության շատ ցածր մակարդակի վրա գտնվող մարդն անգամ առանց վերլուծական քացատրությունների, հենվելով սուկ իր կյանքի պարզունակ փորձի վրա, բնազդորեն ըմբռնելով իր գոյության համար բնության ունեցած նշանակությունը, իր համար պաշտամունքի առարկա՝ տոտեմ ընտրել է բնության այն տարրը, որի հետ ավելի շատ է շփվել և որի միջոցով գոյատևել է: Հետևապես բնական է, որ այդ տոտեմի նկատմամբ մարդու պաշտամունքի հիմքում իր բաժինն է ունեցել նաև բնության օգտակարության թեկուզ և բնազդական ընկալումը:

Երբ ուսումնասիրում են արցախյան ժողովրդական բանահյուսությունը, զարմանում և հիանում են մեր ժողովրդի պատմական իմաստության վրա, որն ի հակադրություն մարդ-բնություն «հակոտնյաների» համադրության, որի համաձայն մարդը պետք է բոլոր միջոցներով պայքարի և նվաճի բնությունը, այդ երկուսի փոխհարաբերությունները մեկնաբանել է որպես հարազատական հարաբերություններ: Ժողովուրդը դեռ շատ հին ժամանակներից առաջ է քաշել իր իմաստուն ըմբռնումը մարդ-բնություն փոխհարաբերության մասին, ցույց տալով, որ այն պետք է ոչ թե թշնամական և նվաճող-նվաճվողի հարաբերություն լինի, այլ հարազատ զավակի և ծնողի, զավակ, որն իր վրա ամեն քայլափոխի զգում է ծնողի սերն ու հոգածությունը, և որի դեմ ոչ թե պետք է պայքարի ու նվաճի, այլ աստիճանաբար իմաստնաճալով հասկանա նրան և ինքն էլ իր հերթին երախտագետ սիրով ու հոգատարությամբ վերաբերվի իր ծնողին՝ մայր բնությանը:

Ժողովրդական բանահյուսության ժանրերից թերևս ավանդություններն են, որտեղ բնությունը, աշխարհագրական միջավայրը, կոնկրետ մարդիկ, կենդանիներն ու բույսերը, պատմական, կրոնական և այլ իրողությունները առավել ճշմարտացի իրական գույներով ու պատկերներով են ներկայանում՝ զերծ ավելորդ այլաբանություններից, չափազանցություններից:

Մենք համաձայն ենք վաստակաշատ բանագետ Արամ Ղանալանյանի այն կարծիքին, որ «Ժողովրդական ավանդությունները իրեն բանարվեստի ուրույն տեսակներից մեկը ցարդ իրենց համակողմանի մեկնաբանությունը չեն ստացել բանագիտության մեջ»<sup>1</sup>:

Համաձայնելով վաստակաշատ գիտնականի այն բնութագրմանը, որ ավանդությունները նպատակային և ճանաչողական բնույթի ստուգաբանական, քացատրական և վարքաբանական ստեղծագործություններ են, որոնք ժողովրդի կողմից ընկալվում են իրեն «հեռու և մոտիկ անցյալում եղած ու կատարված իրերի ու երևույթների, դեմքերի ու դեպքերի վերաբերյալ ճշմարտացի հաղորդումներ և հուշապատումներ»<sup>2</sup>, մենք վերապահումով ենք ընդունում նրա այն պնդումը, թե ավանդությունները գերազանցապես ունեն «ճանաչողական բնույթ», և եթե ժողովրդական բանավոր արձակի մյուս բոլոր ստեղծագործությունները (հեքիաթ, վեպ, գրույց և այլն) կոչված են ծառայելու հիմնականում ունկնդիրների գեղարվեստական պահանջմունքների բավարարմանը, ապա «ավանդությունների գլխավոր դերը ունկնդիրներին համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդելն է. գեղարվեստական ներգործման խնդիրն այստեղ ստորադաս նշանակություն ունի»<sup>3</sup> (ընդգծումները մերն են— Է. Բ.):

Արցախյան բանահյուսության այս ժանրի բնագրի լեզվով ու ծավալով անփոփոխ գրի առնված նմուշների մեր ուսումնասիրումը վկայում է, որ նրանց մեծ մասը լինելով ճանաչողական մեծ արժեք ունեցող պատմական հավաստի փաստեր և իրողություններ, պատ-

<sup>1</sup> Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ ԺԵ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ ԼԳ:

<sup>3</sup> Նույն տեղում:

մակամ հերոսների, վայրերի, կառույցների, կենդանիների, բույսերի, իրադարձությունների և դեպքերի նկարագրություններ, միաժամանակ գեղարվեստական ինքնատիպ ստեղծագործություններ են, որոնցում ցայտունորեն արտահայտված են գեղարվեստականության վերը նշված չափանիշները<sup>4</sup>:

Մեր այս կարծիքին կարող են համաձայնել բոլոր նրանք, ովքեր արցախյան ավանդություններին ծանոթանում են այդ ժողովրդի բարբառով, ոչ թե համառոտված, այլ ընդարձակ բնագրով, որովհետև Ա. Ղանալանյանը իր վերոհիշյալ գրքում արցախյան ավանդապատումների մի մասը զետեղել է կրճատ տարբերակով և գրական լեզվի վերածած: Այս հանգամանքը բնականաբար ընթերցողին հնարավորություն է չի տալիս լիարժեք գաղափար կազմելու արցախյան բարբառի համ ու հոտի, ազգային երանգավորման և ինքնատիպության այլ հատկանիշների մասին՝ դրանով մեծապես վնասելով ավանդապատումների գեղարվեստականությանը:

Այսպես՝ կյանքի տարբեր իրական երևույթների գեղարվեստական պատկերման ենթ հանդիպում հետևյալ ավանդություններում «Հովվի սար» (ազահություն և պատիժ), «Դեպ առու կամ դեպ Արդ» (հավերժական սեր), «Արջի ճղբյւր» (բնապատկեր), «Մաղաղիս» (դժբախտ սեր), «Ջրաբերդ», «Մարտակերտ» (հերոսական պայքար), «Կամուրջ» (սեր), «Սուրբ Սարիբեկ» (անձագոհություն), «Ջուխտակ խաչ» (հերոսություն և անձնագոհություն), «Քըչեղակն ան պառավը» (բնության նկատմամբ երախտամիտություն), «Անահիտին ախալսր» (ազնիվ աշխատանքի փառաբանում) և այլն:

Մարդու և բնության բարեկամական հարաբերությունների խոր ու փիլիսոփայական գաղափարը կարմիր թելի պես անցնում է արցախյան բանահյուսության համարյա բոլոր ժանրերի ստեղծագործություններում, այն մի դեպքում ներկայանում է որպես գեղեցիկ ավանդություն՝ երախտամոռ մարդուն հիշեցնելով իր բարոյական պարտքը բնության նկատմամբ («Մարթն ու արջը»), պատժելով անշնորհակալ պառավին, որ իր պանդուխտ գավակին փրկող կաշառակին որոշում է քարով կերակրել, մի այլ դեպքում ժողովուրդը իր ավանդություններում փառաբանում է սքանչելի բուժիչ օդ ունեցող բնությունը («Ծուշի»), նրա գեղեցկությունները («Ջարդարաշեն»), նույնիսկ մարդկանց կողմից արհամարհված ազգավին, որն անձնագոհաբար, իր մահվան գնով փրկում է մարդկանց թունավորվելուց, որի համար էլ մեր երախտագետ նախնիները ազոավի զոհվելու վայրը կոչում են «Ազոավի գերեզման» կամ «Լեռնավորչի ազոավ»:

Մարդու նկատմամբ բնության զավակների հուզիչ վերաբերմունքի գեղեցիկ դրվագ է «Արջի գերեզմանը» ավանդությունը, որտեղ պատկերված է, թե ինչպես եկեղեցի կառուցող մարդկանց արջը օգնել է ծանր քարեր բարձրացնելու, իսկ նրա շունը փչելուց հետո երախտագետ հավատացյալները մեծ հոգատարությամբ թաղում են արջի մարմինը եկեղեցու մոտ և ուխտատեղի դարձնում, մոմ վառում և մատաղ անում:

«Յիցեռնակն ան օձը» ավանդությունում պատկերված է, թե ինչպես է ծիծեռնակը փրկում մարդկանց օձի կծելուց և թե ինչպես այդ օրվանից որպես մարդկանց հարազատ բնակվում է նրանց օթևաններում:

Մարդու և բնության զավակների բարեկամության հուզիչ մի պատմություն մեկ անգամ ևս վկայում է, որ բնությունը պետք է ոչ թե որպես թշնամի դիտել և նվաճել, ստրկացնել, այլ հասկանալ նրա և նրա զավակների լեզուն, զնահատել ու պահպանել այն:

Արցախյան ավանդությունների մի մասը ըստ ժանրային առանձնահատկությունների չեն ենթարկվում տիպաբանական դասակարգման այն պատճառով, որ շատ քազմազան են նրանց կառուցվածքը, այուժետային զարգացման կերպը, պատկերավորման արտահայտչական եղանակները: Այսպես, որոշ ավանդություններ («Հովվի սար», «Դեկ առու») իրենց կառուցվածքով հիշեցնում են հեքիաթները, սակայն ավելի համառոտ են, հաճախ ունենալով այուժե, իր բաղադրամասերով (հանգույց, զարգացում, կուլմինացիա, հանգուցալուծում) զուրկ են հեքիաթի կանոնիկ սկզբից ու վերջից («Լինում է, չի լինում...», «Երկնքից երեք խնձոր ընկավ...»), և որ կարևոր է, արտացոլում են կյանքի, մարդկային հարաբերությունների ճշմարտացի պատկերը համապատասխան հոգևոր-բարոյական մտահանգումներով:

<sup>4</sup> «Ավանդապատում», էջ ԻԳ:

<sup>5</sup> Ի միջի այլոց, Ա. Ղանալանյանը նույնպես իր բարձրարժեք «Ավանդապատում» գրքում առանձին պարագրաֆ է նվիրել ավանդապատումների գաղափարական-գեղարվեստական արժանիքների բնութագրմանը, ի վերջո եզրակացնելով, որ այնուամենայնիվ «լինելով աշխարհաճանաչողության յուրահատուկ միջոցներ, ավանդությունները միաժամանակ նաև բանաստեղծական ստեղծագործություններ են, բնության և մարդկային կյանքի երկվայթների գեղարվեստական ընկալման ինքնօրինակ արտահայտություններ» (ընդգծումները մերն են— է. Բ.):

Այլուժեն զարգանում է սրընթաց, հանգուցալուծումները խտացնում են հոգեբանական գեղազիտական մեծ լիցք, որով և ապահովում դաստիարակչական ուժգին ներգործություն: Որոշ ավանդություններ ներկայացնում են դրամատիկ վիճակների, իմաստային ուղղակի և այլաբանական մեծ լիցք ունեցող իրավիճակների հակիրճ նկարագրություններ, նշանավոր անձանց կենսագրության ցայտուն դրվագների սեղմ պատմություններ («Վարարա», «Խիկարն ան Սողոմոն իմաստունը», «Աշուղ Սարգսի մասին», «Աշուղ Առուստամի մասին»), իրական փաստերի, իրադարձությունների գեղազիտական հակիրճ քննադրումներ, որոնք ունեն ընդհանրացման մեծ ուժ և ազդեցություն («Արջի աղբյուրը», «Կոտրած եխժե», «Ավանաքար») մարդկային բնավորության տարբեր գծերի գնահատականներ՝ երախտագիտության» («Ռուսեն ձիայիր», «Արջի գերեզման»), ազատության դատապարտում («Թաղալ ձխայիր», «Պառավաթումբ»), քարոչական խրատաբանություններ («Անահիտին ձխայիր», «Մարդն ու արջը») և այլն:

Խորունկ փիլիսոփայական իմաստ ունի «Կրակը, ճյուղը, խիղճը» ավանդությունը, որը պատգամում է երբեք չբաժանվել խղճից: Մի շարք ավանդություններում արտահայտված է բողոք իշխող բեգերի անօրինական վարքի, առաջին գիշերվա իրավունքի դեմ («Եվանդություն Ղիշա վանքի մասին»), սեփական հավատը պահպանելու հաստատականություն («Հայերու խաչը»), գովաբանվում է Գանձասարի վանքը նվաճել ցանկացող «շահի մահը սրով բերող» ծերունուն («Ծառի մատուր»), փառաբանում է սեփական պատիվը թշնամուց ինքնասպանությամբ փրկող աղքատ հիշատակը («Ծծաքար»), խորհուրդներ տալիս գինու չարաշահման վճահների մասին («Եսողողի վագի մասին») և այլն: Ազգային ինքնասպանության երանգավորմամբ է արտացոլված բոլոր ժամանակներում համայն մարդկությանը հուզող մարդու իրավունքներից ու սրբազան ազատություններից մեկի՝ անբռնադատ սիրո գաղափարի փառաբանումը, որն իր հուզիչ արտացոլումն է գտել դաժան հոր գնդակներից զոհված անմուրազ սիրահարներին նվիրված «Քարկապ» խորագիրը կրող մի գողտրիկ ավանդության մեջ, որտեղ իրական դեպքի՝ Հաղորթի Բայանդուր իշխանի գեղեցկուհի աղջկա՝ Վարդիթերի և չորսն Արսենի ողբերգական սիրո պատմությունը ներկայացված է որպես անձնագրի և հավերժական սիրո մի ձև:

Մեջբերենք մի հատված, որից երևում է, թե պատկերավորման և արտահայտչական ինչ գողտրիկ միջոցներով է ներկայացնում ժողովուրդը իր գեղեցկուհի Վարդիթերին. «Ամմա լոխճան նախշունը, լոխճան դձաճանգյալ Բայանդուր իշխանին մաղար-գյնողանք արեճիկն էր՝ Վարդիթերը: Նա մման էր տասնըմեկն օրվա պիլլորված լուսնընգյի, կյանքունքվա արեքակին առաչի շողերին, ընդրա թըշերը հենց էր ծաղկած խընձիրի ծառի ծաղիկների ուննգյի, աշկերը խումար-խումար, ունքերը կըն-կընտ, ճակատը հունցու սպիտակ ծիւն, պըռոշ-ցին վարթի թերեր, ծամերը ծըփան, քոյավ, քուսաթավ»:

Ահա թե հոր գնդակից զոհվելուց առաջ Վարդիթերն ու իր սիրած տղան՝ չորսն Արսենը, ինչպիսի երանության մեջ են անցկացնում իրենց հարսանեկան եզակի գիշերը քնության գրկում. «Էտ քըշեր վըերս ըրած, սըվեր Բայանդուր իշխան հան իրան ծըռտտենքը ամման տըղ ման ըն կյան վարթիթերին հետան...»

Էտ քըշեր լուսնինգյանն ճան ասթները հըրսանիք ըն անըմ Արսենին ճան Վարթիթերին հետի, ակունք ճան ծաղկունք ըն թափում հարսին շորերին, սարեր ճան քոյերը մակարնի լըն տընընըմ, ընդրանց պաշտպանըմ, վըեր կյան վըեշ Արսենին խըտտան Վարթիթերին պուք տան, տանին...»

Էտ քըշեր մինչեվ լուսը պենվալը սարերին գովը ըտրանց հետի ծաղիկների հոտ աս պըերըմ, էրված սըրտըններին հով աս պըերըմ...»:

Անձնագրի հայրենասիրության և խիզախության գովքն է արված «Վանք գյուղի մասին» ավանդությունում, որտեղ հուզիչ պատկերներով ներկայացված են իր զավակի կյանքը հայրենիքի փրկությանը զոհաբերող Գոհվար բիրին և նրա անվախ տղան՝ Սամվելը, որը պատրաստվում է կենդանի թաղվել իր տիրուհու՝ Թամար թագուհու ամրոցի պատերի հիմքում՝ դրանք անտիկ դարձնելու նպատակով:

Եվ ահա, երբ ժողովրդի սիրելի «լեն ճակատով, սև մագերով, խելունք, հայրենասեր, ժողովրդասեր, պատանգի Սամվելը, «կրխը պըցուր պահած», խորապես գիտակցելով, որ «հայրենիքին, սերին անա մըեն փառքն ան պատիվ չի կա», իջնում է ամրոցի հիմքն ի վար ու պտրաստվում նրա հետ ձուլվելով, ամուր պատ դառնալ ամրոցի պարսպում: Այդ պահին, որպես սերունդներին ուղղված իմաստուն մի խորհուրդ, որպես գեղազիտական հավերժ իդեալ, հնչում են Վարթանանց Ապրհամի իմաստուն խոսքերը՝ ուղղված Թամար թագուհուն. «Քանի վըեր քու երգիլըմըտ կա խոի մին կընեզ, վըեր իրան մաղար տըղան տալիս աս հայրենիքին պաշտպանության կործին, քանը վըեր քու երգիլըմըտ կա Սամվելին նման տըղերք, վըեր իրան ջահիլ գյանքը զոհըմ ըն իրան հայրենիքին պաշտպանության համար, հինիչի՞ յա պըեթկ քու ամրոցըտ, էտ պատեր ճան պարիսպանին...»:

Հիրավի, դարերի փորձը ցույց է տվել, որ հայրենիքը պաշտպանող ամենահզոր ամ-

իոցը ոչ թե ժայռակոփ կերտվածքներն են, այլ ժողովրդի հայրենասիրությունը, անկրտրում կամքը, անձազոհ խիզախությունը:

Գեղարվեստական բարձր արժանիքներով են օժտված նաև արցախյան բանահյուսության մյուս ժանրերը, որոնք նույնպես կարող են գիտական ուսումնասիրության:

**Յ. Յ. БАГДАСАРЯН — Попытка оценки фольклора Арцаха.** — В статье автор останавливается в первую очередь на жанровом и тематическом многообразии арцахских сказок, отражающих мироощущение. быт, природу, психологию и идеалы народа.